«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵԼԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեման՝

Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Առարկան՝ հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝Հովսեփյան Թամարա

Ուսումնական հաստատություն՝ Մաստարայի միջնակարգ դպրոց

Երևան 2022

Ներածություն

Ինչպես աշխարհի հնագույն ժողովուրդները ,այնպես էլ հայ ժողովուրդը ,որն եկել է հազարամյակների խորքից, հարուստ է ժողովրդական բանահյուսությամբ գրեթե բոլոր ժանրերով. Օրինակ՝ աշխատանքային երգեր, հմայություններ, աղոթքներ, ավանդություններ, առասպելական զրույցներ, հեքիաթներ, էպոս

Հանելուկներ, առակներ:

Աշխարհի հնագույն ժողովուրդները ունեն ժողովրդական բանահյուսության այս հարուստ ժանրը՝ էպոսը (դյուցազներգություն), որ այդ ժողովուրդների պատմական փառավոր անցյալն են ներկայացրել իրենց դրական ու բացասական հերոսներով,պատերազմական հաղթանակներով, ազգային սովորույթներով, կենցաղով և այլն:

“Գիլգամեշ „ էպոսը շումերաբաբելական ազգային էպոս է:Պատմությունն առաջացել է շատ ավելի վաղ:Գիլգամիշը և Էնկիդուն սպանում են հրեշին:Գիլգամիշը փնտրում է հավերժական կյանքի գաղտնիքը և իմանում,որ ոչ մի մարդ չի կարող խուսափել մահից:

Ֆիրդուսի «Շահնամե» պարսկական ազգային էպոս

Իրանի պատմությունը հնագույն շրջանից մինչև Խոսրով II շահի ժամանակները,էպոսի նշանավոր դաստաներից է «Ռոստամ և Սոհրաբը»:

Այստեղ արտահայտվում է արդարության և անարդարության հակադրությունը:

«Ռաֆայանա» էպոսը հնդկական հնագույն շրջանի ազգային հոգևոր արժեք է:Այստեղ արտահայտվում են մարդկային արժեհամակարգի լավագույն արժեքները;

Ռուսական լավագույն երգ- էպոսը «Իլյա Մուրոմեցը»ռուսական գրականության հոգևոր գանձն է:

Հայկական ժողովրդական հերոսական էպոսը՝ “Սասունցի Դավիթը” վիպական պատմողական ստեղծագործություն է:Մեր էպոսի արմատները ձգվում են մինչև նախնադար ,բայց ամբողջական ստեղծագործական տեսք է ստացել X դարում:Արաբական զավթիչները VII-X դարերում սրով ու հրով նվաճեցին Հայաստան աշխարհը:Ժողովուրդն ոտքի կանգնեց իր դյուցազունների հետ և մաքառեց երկրի դաժան թշնամիների դեմ:

Ժողովրդի կողմից ստեղծվեց “Սասունցի Դավիթ„ ժողովրդական վեպը, որը մեր բանահյուսական գրականության մեջ ադամանդակուռ գրական կոթող է:Այն հարուստ է հուզականությամբ ,հակիրճությամբ, պայծառությամբ,պարզությամբ,ճշգրտությամբ, պատկերավորությամբ:Էպոսը համեմված է հիպերբոլիզմով:

Ժողովուրդը ստեղծեց այս դյուցազնավեպը և իր փրկության ազատության հույսը կապեց այդ ջրածին հսկաների հետ:

Դարեր շարունակ մեր սերունդները դաստիարակվեցին նրանց քաջազուն սխրագործություններով , կռվի դաշտ մտան նրանց նման և ջախջախեցին չար ու նենգ թշնամիներին:Այդ տղաներից շատերը կրեցին նրանց անունները,նրանց անուններով կոչվեցին փողոցներ ու թաղամասեր, գյուղեր, քանդակվեց Սասունցի Դավթի արձան:

Դարեր են անցել, հսկաները անմահացել են մեր ժողովրդի սրտում՝իրենց քաջությամբ, հայրենասիրական վառ արժեքներով:Նրանք մեր երկիրը պահում էին խաղաղ, չէին սիրում պատերազմներ,ոչ թե վախենում էին թշնամուց ,այլ նրանք իրենց զերբնական ուժը օգտագործում էին ժողովրդի բարեկեցիկ, ստեղծագործ կյանքի համար:Խաղաղությունը ինքնին ազգային արժեհամակարգ է ,որ նրանք փոխանցեցին հայ ժողովրդի գալիք սերունդներին:

Էպոսը հունարեն բառ է ,որ նշանակում է խոսք ,պատմություն:Բանահյուսության մեջ ծավալուն և բարդ թեմա է ,որը բաղադրվում է վիպական երկերից,ավանդություններից,զրույցներից:

2012թ.-ին «Սասունցի Դավիթ՞ էպոսը ընդգրկվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական ժառանգության ցուցակում, իսկ 1964թ.-ին աշխարհի վիպերգերի միջազգային մրցույթում :՞Սասունցի Դավիթ՞-ը ճանաչվեց լավագույն:

Շատ քիչ ժողովուրդներ ունեն այդքան ամբողջական, խոր բազմաշերտ էպիկական ստեղծագործություններ,ինչպես նաև քրիստոնեական աշխարհայացքը, հավատն առ Աստված,հավատն առ արդարության հաղթանակի ու լավ ապագայի վերաբերյալ:

Էպոսի վիպասանների բուն հայրենիքը Վանա լճի ավազանն ու նրանից հարավ - արևմուտք և հյուսիս –արևելք ընկած գավառներն են՝ Սասուն, Մուշ, Բաղեշ, Մոկք, Ծատախ,Ալաշկերտ, Մանազկերտ և այլն:

Էպոսի գաղափարական ոգին հայ ժողովրդի հերոսական մաքառումն է արաբական զավթիչների դեմ:

“Սասնա Դավիթ ”վիպերգի մասին անգամ հիշատակել են Պորտուգալացի ճանապարհորդներ՝ Անտոնիո Տերեյրինեն և Մարիե Ֆոնսոն, որոնք XVI դարում իրարից անկախ շանապարհորդել են, եղել են Հայաստանում,Սասունում, լսել են տեղի բնակիչներից տարբեր զրույցներ Դավթի ու Խանդութի մասին:

Այս կերպարների մեջ ժողովուրդը նաև ներդրել է այն հայացքները, ովքեր պատերազմ չեն հրահրում, բայց ստիպված են կռվել թշնամու դեմ:

1939թ.-ին Երևանում “Սասունցի Դավիթ„ էպոսի հազարամյա հոբելյանը նշվեց, եղավ Սասունցի Դավթի արձանի բացումը:

Արձանագործը՝ Երվանդ Քոչարը,1941թ.-ին ձերբակալվեց ,իսկ քանդակված արձանը ոչնչացրին:Մեղադրանքներից մեկն էլ այն էր, ու հեծյալը նայում է դեպի �triangleՔարեկամ՝ Թուրքիային՝:

Երվանդ Քոչարը երկու տարի չորս ամիս դատապարտվեց:Կալանավայրից վերադառնալուց հետո `կանգնեցրեց Սասունցի դավթի արձանը կայարանամերձ հրապարակում:Հրապարակը կոչվեց Սասունցի Դավթի հրապարակ:

″Սասունցի դավիթ″ էպոսը բաղկացած է չորս ճյուղերից , որոնք չորս սերուդներ են:Նրանք հայ ժողովրդի համար անձնուրաց նվիրյալներ են:

Էպոսի դաստիարակչական կողմերը՝

1.Հայրենասիրություն

2.ժողովրդասիրություն

3.Աշխատասիրություն

4.Հոգու անաղարտություն ու մաքրություն

5.Պետականաշինություն

Էպոսը մեզ սովորեցնում է, որ միշտ երկիրն չի կարող լինել հզոր, անպարտ, այն կարող է ունենալ նաև անկումներ:Դրա ապացույցն էր այն, որ Գագիկ թագավորը հարկատու էր Մսրա Մելիքին:Բայց էպոսում պայքարող ու մաքառող հայ ժողովրդի անպարտելի ոգին է:Այս դյուցազնական էպոսը հազար տարի բանավոր խոսք մնաց:Առաջին ասացողը Մշո դաշտի Առինստ գյուղի բնակիչ Կրպոյից գրի էր առել 1874 թվականին հայտնի բանահավաք ″Գրոց –բրոց″ հայտնի ժողովածուի մեջ Գարեգին Սրվանձտյանը:1939 թվականին կազմվել է էպոսը հիսուն պատումների վրա:Հայոց Գագիկ արքան հարկատու էր արաբական Խալիֆին :Արաբ հարկահանները այդ ժամանակ տեսնում են Գագիկ արքայի գեղեցկուհի աղջկան՝ Ծովինարին:Նրանք այդ լուրը հասցնում են արաբական Խալիֆային:Հարկահանները նորից մեկնում են Հայաստան և ներկայացնում Գագիկ թագավորին՝ Ծովինարին արաբական երկիր տանելու Խալիֆի պահանջը:Ծովինարը, մինչև օտար երկիր գնալը , շրջում է հայրենի դաշտերում և կարոտն առնում:Նա ծարավում է, և նրա խնդրանքով ծովը ետ է գնում, և տակից բխում է մի լուսավճիտ ու հորդաբուխ աղբյուր:Հետո ժողովուրդը այդ աղբյուրին կոչում է Կաթնաղբյուր:Խմում է Ծովինարը աղբյուրի ջրից մի լիքը և մի կիաստ բուռ:Ժողովրդի ցանկությամբ Ծովինարը այդ ջրից ունենում է երկվորյակ զավակներ:Խորագետ գեղեցկուհին մտածում էր, որ ինքը ավելի լավ է հանձնվի կռապաշտ թշնամուն, քան պատերազմում զոհվեն հազարավոր հայ զինվորներ:

-՞Իս մեկ ջան իմ,երթամ կորսվեմ աղեկի,քանց իմ խոր երկիր ավերվի՞:

Ծովինարը իր խիզախ արարքով արտացոլում է ժողովրդի ազատագրական պայքարի ամենանախնական աստիճանը:Ծովինարը քաջ, խիզախ ,հայրենասեր հայուհի էր:Բաղդասարն ու Սանասարը իրենց մեջ ունեին ջրի գերհզոր ուժը,որ օգտագործում էին երկրի կառուցողական աշխատանքներին և պաշտպանության գործին:Նրանք հայրենիքում տներ կառուցեցին նախ անտուն բնակիչների համար,հետո ժայռերից հսկա քարաբեկորներ պոկելով՝կառուցեցին Սասուն բերդաքաղաքը;Նրանք երկրի պետության ու պետականության ամրապնդման ջատագողներ էին:

Էպոսի հաջորդ սերունդը՝ Սասնա Մհերը , Սանասարի որդին էր,որ իր քաջագործություններով, սխրագործություններով դարձավ թշնամու սարսափը:Նա իր գերբնական ուժով ամեհի առյուծին երկու մասի բաժանեց,և այդ օրվանից նրան անվանեցին Առյուծաձև Մհեր:Մհերի ահից ոչ մի թշնամի չէր հանդգնում խախտել Հայաստանի սահմանները:Մեր

հսկան դյուցազուն էր ,ժողովրդասեր էր,ուներ մարտական ոգի:Նա նաև մեծ շինարար էր,որ կառուցեց Մարաթուկի Սուրբ Աստվածածին

վանքը:Արաբների թագավորը նրա հետ պայման էր կապել, որ ով շուտ մեռնի մյուսը տեր դառնա նրա ընտանիքին ու երկրին:Խալիֆը մեռնում է ,և Մհերը յոթ տարի բացակայում է երկրից, մեր երկիրը թողնում անտեր ու անժառանգ:Բայց օրերից մի օր բաց պատուհանից լսում է Իսմիլ Խաթունի երգի բառերը,որ Մհերից ունեցած որդուն՝

Մելիքին ,սովորեցնում է ,որ մեծանա, հայոց օջախը քարուքանդ անի, արաբական երկիրը շեն պահի:

″Մսրա օջախ կ՛ահգնեցուցես,հայի օջախ փչացուցես″

(Սասունցի Դավիթ» էպոսից):

Դարեր են անցել, այսօր էլ մեր թշնամիները իրենց յուրտաբնակ նախնիների երգերն են սովորեցնում իրենց զավակներին:Միերը վերադառնում է հայրենիք, նրա կինը՝ Արմաղանը, խախտում է իր ուխտը հանուն հայրենիքի փրկության՝զավակ են ունենում:Որ օրն,՝ որ ծնվում է Դավիթը,այդ օրն էլ մեռնում են Միերն ու Արմաղանը:

Դավիթը մեծանում է որբ և դառնում է ժողովրդի ամենասիրելի կերպարը:Ժողովուրդն իր ազատությունը կապում է Դավթի հետ:Դավթի անսահման հայրենասիրության, ազատասիրության ու հերոսական սխրագործությունների մեջ խորհրդանշում են շողովրդի նույնանման հատկանիշները:

Մեր ժողովուրդը միշտ էլ նմանվել է մեր դյուցազուն հերոսներին:Դավթի անունով թաղամասեր ու փողոցներ կան Երևանում:Գյուղեր են կոչվել նրա անունով, վեր է խոյանում Սասունցի Դավթի հրաշակերտ արձանը՝ Քուկիկ Ջալալին հեծած, Թուր Կեծակին ՝ձեռքին:Դա ժողովրդի տածած սիրո վառ ապացույցն է Դավթի նկատմամբ:

Շատ հայ տղաներ կրում են նրա թանկ անունը և հպարտանում :″Դավիթ կոչումը գալիս է չափազանց խորին հնությունից»:Հնդկական վեդաների մեջ աստվածների ընդհանուր անունը Դյով է, որ նշանակում էամենազոր, լուսավոր, պայծառ:

Իրոք որ ,Դավիթ դյուցազունը ամենազոր էր, որ մեջտեղից հավասար կես արեց կռապաշտ , բռնապետ Մսրա Մելիքին, որ խաբեությամբ կանչեց Դավթին ու հորը գցեց:Բայց Դավիթը իր գերբնական ուժը օգտագործեց , դուրս եկավ հորից և ոչնչացրեց ժողովուրդների ատելի բռնակալին՝ Մսրա Մելիքին:Դավիթը հավատում էր իր թշնամիների նենգ ու կեղծավոր հոգեբանությանը,բայց հետո դաս էր առնում այդ փորձություններից:Դավթի նման հայրենասեր,քաջ նվիրյալ էր Խանդութ խանումը:

Նա աննման գեղեցկություն ուներ և այդ շքեղ փայլով էր դյութել մեր դյուցազնին:Դավիթը մեր ժողովրդի հավաքական կերպարն է:Նրա մեջ կապակցված են ժողովրդասիրությունը, հայրենասիրությունը, մարդասիրությունը, բնապաշտությունը:

Դավիթը ռամիկի և աշխատավորության պաշտպանն էր, անձնուրաց, քաջ, մարդասեր, խաղաղասեր:

Դավթի որդին՝ Փոքր Միհրը,դառնում է հորից հետո՞ Ջոջանց տան՞ տերն ու ապավենը:Նա սպանում է Չմշկիկ Սուլթանին և լուծում իր հոր վրեժը:Նա ամուսնանում է Պաչիկ թագավորի դուստր գեղեցկուհի Գոհարի հետ :Երբ վերադառնում է կնոջ մոտ :Փոքր Միհրը, նրան մեռած է գտնում:Նա Գոհարի դին թաղում է Խանդութի գերեզմանի մոտ:Մենամարտի ժամանակ Դավիթը անիծում է որդուն,որ մնա անժառանգ և անմահ:

Միհրը շատ անարդարություններ է տեսնում հայոց աշխարհում, և անարդար աշխարհն այլևս չի կարողանում պահել նրան:Նա զենք ու զրահով, Քուռկիկ Ջալալիով փակվում է Վանա քարի կամ Ազռավաքարի մեջ :Նա այդ քարից դուրս կգա միայն այն ժամանակ, երբ…

Աշխարհք ավերվի, մեկ էլ շինվի, երբ որ ցորեն էղավ քանց մասուր մի,ու գարին էղավ քանց ընկույզ մի:(Սասունցի Դավիթ էպոսից):

Էպոսում բանասացը յուրաքանչյուր հերոսին անվանում է Սասնա ծուռ, այսինքն՝ ուղղամիտ, կամակոր, խենթի նման հանդուգն և հայրենասեր կտրիճ:Պարզ ու արդարամիտ են մեր հսկաները, բայց ոչ պարզունակ:

Օրինակ՝ Դավիթը ասում է արաբ ժողովրդին.

Ելեք գացեք ու ձեր տներ նստեք

Հնադարտ կացեք՝

Մեկ էլ չելնեք ու գաք վեր Սասուն,

Մեկել էլ, որ զենք առնեք

Մեր դեմ,

Թե,որ դուք կռվի գաք վեր մեզ,

Քառսուն զազ խոր հորում լինեք,

Թե ջաղացի ջոջ քարի տակ,

Տելնի ձեր դեմ Սասնա Դավիթ,

Տելնի ձեր դեմ Թուր Կեծակին:

(Սասունցի Դավիթ էպոսից):

Էպոսում ժողովուրդը և նրա հերոսները խաղաղություն են պահանջում ոչ թե նրա համար, որ իրենք թույլ են ու տկար, անզոր ու անհամարձակ,այլ նրա համար, որ հզոր են ու անպարտելի:

Մեր դյուցազունները ատում են պատերազմը, որովհետև հարգում են ժողովուրդների ինքնությունը, սիրում են լիարժեք կյանքն ու ստեղծագործ աշխատանքը:

Գեղեցիկ ու զորեղ են մեր հսկաները:Նրանք նման են մեր նախապապ Հայկին, քաջ Վարդան Մամիկոնյանին, Սմբատ Բագրատունուն:Նրանք մենակ են գնում պատերազմի դաշտ:Դավիթը մենակ գնաց Մսրա Մելիքի դեմ և երկու կես արեց նրան:Միերը մենակ գնաց առյուծի դեմ և երկու մասի բաժանեց նրան:Մեր հերոսները անպարտելի քաջ են, լավ շինարարներ են, հողագործներ, նաև ուսումնասեր են:Նրանք սիրում էին Սասնա լեռների ծաղկաբույր սարերը ,պաղպաջուն աղբյուրները, թավուտ անտառները:Նրանք նաև մեծ բնապաշտ էին:Էպոսը հարուստ է ժողովրդական ասացվածքներով, թևավոր խոսքերով, օրինակ՝ առյոծն առյուծ է, լինի էգ թե որձ:Կամ Միերը ծնողների գերեզմանի վրա այնքան լաց եղավ, որ արտասուք զգետին երից խանդակ ու գնաց:Հանդութն ապտակում է Դավթին «Ինչ հաղբյուր ջուր կթլե ընց կամ արյուն Դավթի բերնեն եթալն է»:

Քանի որ“ Սասունցի Դավիթ ”էպոսը ժողովրդական ստեղծագործություն է, ապա էպոսը գրվել է Սասուն գավառի ժողովրդի բարբառով:

Նրանց հետնորդները քաջ ֆիդայիներն էին, որ Սասունի լեռներում, Մշո դաշտում կռվեցին և ընկան հանուն հայրենիքի:Դրա վառ ապացույց է Խաչիկ դաշտենցի

«Ռանչպարների կանչը» վեպը կամ ասքը:Յուրտաբնակ քոչվորները փերթ-փերթ խլեցին մեր դրախտային տարացքները, քանդեցին ու հրկիզեցին մեր եկեղեցիներն ու վանքերը, սրբապղծեցին ու թալանեցին մեր սուրբ կոթողների հոգևոր գանձերը:Կորստի ցավը մեր սրտի մեջ Մեծ եղեռնից հետո՝ վերընձյուղվեցինք և գոյահաստատվեցինք:

Հայրենասիրական դաստիարակությունը մեր դպրոցներում դարձավ առաջնային:

Մեր ազգային ժաղովրդական էպոսը՝ «Սասունցի Դավիթը» ,մեր ժողովրդի բանահյուսության մեջ ամենամեծ անգնահատելի հոգևոր Գոհարն է:Մեր դյուցազուններն իրենց մարդասիրական ,հայրենասիրական ,ժողովրդասիրական արժեքներով դաստիարակեցին մի ամբողջ ժողովուրդ:Մենք դարեր շարունակ չենք ունեցել պետություն և պետականություն,սահմանները պաշտպանող զինվոր, բայց երբ հայրենիքին վտանգ էր սպառնում, մեր ժողովուրդը միասնական ոտքի էր կանգնում, ինչպես մեր քաջազուն հսկաները:Մեր այլադավան մոլեռանդ թշնամիները քարուքանդ էին անում մեր հայրենիքը, բայց երբեք չէին կարողանում կոտրել հայ ժողովրդի մարտական և հայրենասեր ոգին:

Մեր ժողովուրդը միշտ զգացել է, որ թշնամու դեմ ուժերն անհավասար են, բայց հայրենիքի սերը ամեն ինչից բարձր է ու թանկ մեզ համար:Ամեն մի հայ զինվոր մի Սասուցի Դավիթ է, մի Առյուծաձև Մհեր:Ահա սա է մեր արժեհամակարգը:

Եզրակացություն

Հայ ժողովրդի մարտական ոգին երբեք անհաղորդ չի դարձել իր ցավի կորստի նկատմամբ:"Սասունցի Դավիթ" էպոսը կրթեց ու դաստիարակեց մի ամբողջ ազգ, մի ամբողջ ժողովուրդ:Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում անգնահատելի է:Դարեր շարունակ հայ սերունդները ընդօրինակեցին և սեփականացրին հայ դյուցազունների ազգանվեր հատկանիշները:Հայ զինվորները , ինչպես մեր դյուցազունները, չսվինահարեցին անօգնական ծերերին, անպաշտպան մանուկներին, երբեք չթալանեցին օտարի տունը,չարբապոծեցին օտարների հոգևոր արժեքները:

44-օրյա պատերազմում մինչև ատամները զինված՝հոշոտողի հոգեբանությամբ, քոչվոր ցեղերն իրենց ցեղապետներով լցվեցին Արցախ աշխարհը:Քոչվոր յուրտաբնակները առաջ էին գալիս վիշապօձերի պես գալարները առաջ շպրտելով, բայց այդ անհավասար պայքարում , ինչպես Դավիթը դյուցազուն,ինչպես Միհրն անպարտ, ոտքի կանգնեցին հայոց քաջերը, շատերը հող հայրենուն նվիրեցին իրենց ծաղիկ կյանքը,որպեսզի մնար հայոց աշխարհը:

Թշնամին քաղաքակիրթ աշխարհին ուզում էր ցույց տալ, որ իրենք մարդացել են, բայց նրանք մարդակուլ հրեշների հոգեբանությամբ գազաններ են, որ իրենց գազանային մարմաջը հագեցնում են մարդակերությաբ ու մարդկային արյունով:Հայ ժողովուրդը, հայ մարդը պիտի ամուր պահի հայրենի երկրի սահմանները:Մենք պիտի

կառուցողական լինենք մեր պետականության, մեր պետության, մեր բանակաշինության, մեր պետականաշինության գործում:

Մեր ազգային արժեհամակարգի վառ ապացույցն է Եռաբլուրը:Այդ բարձունքում ննջում են հայոց քաջերը՝ իրենց ծաղկուն կյանքը նվիրելով հազարամյակների պատմություն ունեցող Հայաստանին:

«Կարծես մի գուսան լուռ ոգում է ձեր քաջագործությունների երգը»:

Դուք ընկաք և մնաց Հայաստանը:

Դուք ընկաք և ապրեց հայ ժողովուրդը:

Ձեզանից ամեն մեկը մի Սասունցի Դավիթ է, մի Առյուծաձև Մհեր:

Հավերժ փա՛ռք Ձեզ , իմ հա՛յ քաջեր:

Մահ այդ վայրագ ցեղերին ու ցեղապետներին, որ չորսբոլորը արյուն ու մահ են տարածում, իրենց քոչվորի յաթաղանով ու վայրագությամբ:

Քաղաքակրթությունը, գիրը, գրականությունը, մշակույթը, արվեստը նրանցից շատ հեռու է:

Գրականություն

1.Գրիգոր Գրիգորյան “Հայ ժողովրդական բանահյուսություն„

2. “ Սասունցի Դավիթ„ ժողովրդական էպոս